

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԵՎ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.

- 1) ապ-րինի, նախ-րե, վաղ-րոք, հանր-գուտ
- 2) ան-րեն, տն-րինություն, օրըստ-րե, օր-րել
- 3) մեղմ-րեն, մեղմ-րոր, միջ-րեական, քառ-րդ
- 4) առ-րեական, աշխարհագ-ր, հ-գուտ, հ-դս ցնդել

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ց*.

- 1) կոր-նել, կ-կտուր, ցն-ել, կ-կվել
- 2) կուր-ք, ցն-ուղ, լվա-ք, հինավուր-
- 3) ապաթար-, թյուրիմա-ություն, տաղասա-, հուն-ել
- 4) հանդիպակա-, ընչա-ք, ցան-կեն, փղ-կալ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ւ*.

- 1) ս-եռուն, վագ-ագ, սերկ-լենի, հոգ-որ
- 2) իջ-անատեղի, ուղ-արձ, հ-ասպառ, ալ-որ
- 3) բ-եռ, ոսկ-որել, սեթ-եթանք, ս-երես
- 4) կար-որ, առ-անգել, թեթ-ասահ, գեր-արություն

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յա*.

- 1) Օֆել-, մում-, բար-ցական, միմ-նց
- 2) ն-րդային, Երեմ-, Եպրաքս-, Ամալ-
- 3) գործուն-, կր-, աղյուս-կ, առաք-լ
- 4) գառամ-լ, ատ-ն, վայրկ-ն, այծ-մ

5 Շարքերից քանիստում սխալ գրված բառ կա.

1. հապշտապ, ջրարբի, սփրթնել, հուսախար
2. անոթ, բացօթյա, նախորոք, հողս ցնդել
3. խոչընդոտ, ակնթարթ, մթնկա, ինքնըստինքյան
4. խարխաբել, քամելեռն, շրջագայություն, օձիք

- 1) ոչ մեկում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

6 Ո՞ր շարքի բոլոր բառերում է թավ գրված *ե*-ն արտասանվում *է*.

- 1) աներևույթ, գորատերթ, աներկբա, աներկյուղ
- 2) անելանելի, ամենաեռանդուն, սևերես, ձայներիզ
- 3) քսաներեք, աներևակայելի, տասներեք, բազկերակ
- 4) աներկյուղ, համաեվրոպական, ափեզր, բազմերանգ

73 Պնդումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Հայերենի բացատրական բառարաններից են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» և այլն:
- 2) Բառարանները լինում են հանրագիտական և բանասիրական: Հանրագիտական բառարաններն իրենց հերթին լինում են ընդհանուր և մասնավոր:
- 3) Բանասիրական բառարանները լինում են բացատրական, թարգմանական, հոմանիշների, հակահիշների, համանունների, դարձվածաբանական, ուղղագրական, ստուգաբանական և այլն:
- 4) Ստուգաբանական բառարաններում տրվում են բառերի ծագումը և նրանց առնչակցությունը ցեղակից ու ոչ ցեղակից այլ լեզուների հետ: Այսպիսի ստուգաբանական բառարան է Մ. Աբեղյանի «Հայերեն արմատական բառարանը»:

74 Եղիշե Չարենցի ստեղծագործությունների վերաբերյալ պնդումներից որոնցում սխալ կա:

- 1) «Անակնկալ հանդիպում Պետրոսավլովյան ամրոցում» ստեղծագործության մեջ կերտված է Միքայել Նալբանդյանի կերպարը, որը հեղինակին հիշեցնում է իր մաքառումների մասին:
- 2) «Դեպի լյառը Մասիս» և «Անակնկալ հանդիպում Պետրոսավլովյան ամրոցում» ստեղծագործությունները ընդգրկված են «Գիրք ճանապարհի» ժողովածուում:
- 3) «Տաղարան» շարքը բացվում է «Ինչքան որ հուր կա իմ սրտում՝ բոլորը քեզ» քառյակով և ավարտվում «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությամբ:
- 4) «Դ-անթեական առասպել» պոեմում հեղինակը պատկերել է նաև իր ծննդավայր Կարսը՝ անվանելով այն «մեռած քաղաք»:

75 Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը *ճիշտ է, սխալ է, չգիտեմ* բառերով:

- 1) Ե խոնարհման պարզ բայերը սահմանական եղանակի 2 բաղադրյալ ժամանակաձևեր կազմում են անորոշ դերբայի և օժանդակ բայի ներկա ու անցյալ ձևերի միջոցով:
- 2) Հայերենի անկախ դերբայներն են անորոշը, ենթակայականը, հարակատարը և ժխտականը:
- 3) Բոլոր կախյալ դերբայները /ձևաբայերը/ օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հետ միասին կազմում են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները:
- 4) Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին չ մասնիկ հավելելով:
- 5) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է 2 տիպի վերջավորություններով՝ կախված այն բանից, թե բայը ինչ խոնարհման է պատկանում:
- 6) Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ապառնի ժամանակ և կազմվում են եզակիում՝ *ի՛, ա՛, ու՛*, հոգնակիում *ե՛ք* վերջավորությունների միջոցով:

68 **Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Պատմվածքը և նորավեպը (նովել) փոքր ծավալի արձակ երկեր են, որոնց մեջ սովորաբար պատկերվում է մեկ իրադարձություն, հերոսների թիվը սահմանափակ է. աչքի են ընկնում սրընթաց գործողությամբ, պատմվող դեպքի բացառիկ բնույթով և անսպասելի վախճանով:
- 2) Երգիծանքը իրականության գեղարվեստական արտացոլման ձևերից մեկն է, որին հատուկ է ծաղրը, երևույթները չափազանցված, արտառոց, ծիծաղաշարժ չափերի մեջ պատկերելը:
- 3) Ողբերգությունը և կատակերգությունը դրամատուրգիայի ժանրերից են: Դրանք պատկերում են կյանքի երկու ծայրաթևերը՝ ողբերգական կամ ծիծաղաշարժ դրությունները:
- 4) Դրամայում հանդես են գալիս ավելի սովորական դեպքեր ու հերոսներ: Դրամայի մեջ կարող են լինել ինչպես ողբերգական, այնպես էլ կատակերգական առանձին երանգներ, բայց դրանք չեն դառնում բացարձակորեն գերակշռող:

69 **Բառերից քանիստ՞ում ածանցի հնչյունափոխություն կա.**

խորհրդավոր, մարդկայնություն, աննդամթերք, միջնակարգ, անդնդախոր, նորոգչական, փափկասուն, քաղքենի, ազևոր, անասնապահ, թարգմանչական, հատկություն, թղթակցություն, հրատարակչություն, ժողովրդական, պատանեկան:

70 **Քանի՞ բառազույգեր են իրար հականիշ.**

բուրյան-գարշահոտ, կարմրել-շառագունել, պնակալեզ-կուշտ, լայնախոհ-ներհուն, մակերեսային-խորունկ, մեղք գործել-մեղանչել, հարթ-ողորկ, առինքնել-թովել, գողանալ-հափշտակել, դրացի-հարևան, փափուկ-կակուղ, կանամբի-ամուրի:

71 **Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:**

- 1) Նայելով ծառին՝ ես անընդհատ զարմանում ու մտքումս հարց եմ տալիս. – Ինչպե՞ս ես դիմանում, ծիրանի՛ ծառ:
- 2) Դժվար էր ասել՝ ե՞րբ և ո՞վ էր կորիզը նետել եկեղեցու գմբեթին, բայց ավելի դժվար էր ըմբռնել՝ ինչպես էր կորիզը, հարմարվելով ճեղքում, ծիլ տվել:
- 3) Գիտեմ՝ եկող գարնանն էլ ծառը կծաղկի, հետո պտուղ կտա, և գյուղի տղաների հերթական սերունդը չհամբերելով կմազլցի վեր՝ պոկելու դեռևս կանաչ պտուղները:
- 4) Հետո նրանք կնստեն վերևում՝ կիսավեր գմբեթի վրա, կսեղմվեն իրար՝ ճգնելով տեղավորվել ծիրանենու հովից թրթռացող ստվերում:

72 **Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների թվահամարները:**

Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ լուռ, ինչպես գիշերային ոգիներ, հապճեպ գրկեցին ճերմակ տեսիլն ու չքացան նրա հետ:

1. **չքացան** – ա խոնարհման բայ, սոսկածանցավոր, **հետ** – մակբայ
2. **նույն** – ցուցական դերանուն, **վայրկյանին** - գոյական, **ի** հոլովում
3. **ներս մտան** – հարադիր բայ, չեզոք սեռ, **նրա** – դերանուն, սեռական հոլով
4. **ինչպես** – հարաբերական դերանուն, **ոգիներ** – հասարակ գոյական, **ու** արտաքին հոլովում
5. **հապճեպ** – ձևի մակբայ, **գրկեցին** – պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ

7 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

- 1) ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ԳԱԳԻԿ ԱՌԱՋԻՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ
- 2) ՆԵՐՔԻՆ ԿԱԹՆԱԳԲՅՈՒԻ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՍԱՐԱՆ, ՏՈՐՔ ԱՆԳԵՂ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ
- 3) ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ, ՊԱՐՄԻՅ ԾՈՅ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՏԵՐ ԹԱԳԵՎՈՍ
- 4) ՆՈՐ ՏԱՐԻ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՅԻ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՄԵԾ ԵՂԵՌՆ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) ձեղնահարկ, արնագույն, թույեական, գրել
- 2) երգչախումբ, լճացում, ձնծաղիկ, լայնք
- 3) այգեպան, ձվածե, ընչաքաղց, դստրիկ
- 4) կթվոր, տնական, սնամեջ, ձիավոր

9 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Որդիներից ստացած նամակները պապս նախ մտքում էր կարդում, որպեսզի վերահասու լինի նրանց պարունակությանը, հետո դարձնի ընտանիքի մյուս անդամների սեփականությունը:
- 2) Իմ ականջներում դեռ հնչում է նրա թախծոտ երգը, և թվում է, թե տեսնում եմ օրիորդի՝ սիրո զգացմունքից այրվող դեմքը:
- 3) Վստահ եմ՝ ոչ միայն սիրողները, այլև վարպետ կատարողները նախանձախնդիր կլինեն այսպիսի փայլուն կատարման նկատմամբ:
- 4) Չկները վտառներով բարձրանում են վեր, ուրախ խայտում, և արևի տակ հարափոփոխ կայծկլտում են նրանց սաղափե թեփուկները:

10 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա:**

- 1) Տարիներ, տարիներ կսահեն, Կմեռնեն երազները բոլոր - Քո պատկերը անեղծ կպահեն Օրերում անհաստատ ու մոլոր...
- 2) Միում եմ աչքերիդ տխրությունը խորին, Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ...
- 3) Փոքրիկը անհոգ ժպտում էր՝ փողոցի անցուդարձին անտարբեր:
- 4) Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնածորում ստվերները թանձրանում են, մռայլվում:

11 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:**

- 1) բրուտ - ատաղձագործ, անգիր - բերանացի, բացի - գատ, բերկրավետ - ուրախալի
- 2) բաժանվել - մասնատվել, բանտարկություն - կալանք, թեզանիք – մանյակ, մեկենաս - բարեգործ
- 3) ամբարտակ - պատնեշ, բարձրարվեստ - նրբաճաշակ, բացատրել - լուսաբանել, ազնվաբարո - առաքինի
- 4) բարձրանուն - մեծահռչակ, բեկում - շրջադարձ, բթամիտ - թանձրամիտ, ուստր - ուստրե

12 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը բարդ:

- 1) մեղմանուշ, երգչախումբ, շուրջպար, ընչազուրկ
- 2) երկաթուղի, միջնապատ, գրոսայգի, խորագինի
- 3) խմբագրատուն, մեծ-մեծ, մրցադաշտ, անցուդարձ
- 4) ձիարշավ, հանքափոր, հոգեբույժ, սրտաբաց

13 Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ա ներքին հոլովման:

- 1) մեծատուն, արյուն, անկյուն, գրատպություն
- 2) տեղանուն, գրատուն, հեռագրասյուն, հարություն
- 3) գրություն, ջրշուն, գարուն, գինետուն
- 4) ձյուն, մանկություն, մահ, ուղղանկյուն

14 Ո՞ր տարբերակում դիմորոշ հոդի գործածություն կա:

- 1) Նվաստ դարձա մատնության գործիք, Եվ ներում չունեն էլ ես հավիտյան:
- 2) Վերջերս նրան քիչ էի հանդիպում. խուսափում էր ինձնից:
- 3) -Զնքուշ լուսնի շուշան-փոշին Մաղեց հեզ գետի վրա, Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն, -Սիրտս անդորր կծփա:
- 4) Բայց ո՞ր էր մայրս դալուկ, Ա՛խ, նա էլ էր որբացել, Արցունք դարձել ու մանուկ Աչքիս մեջ էր մնացել:

15 Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:

- 1) ուսապարկեր, օրհներգեր, հրահանգներ, սուսերակիրներ
- 2) ծաղկեփնջեր, վերնագրեր, դասալիքներ, մեկնաբաններ
- 3) ոտնաձայներ, հորաբույրեր, կավագործներ, խնամակալներ
- 4) կանգառներ, անվադողեր, նռներ, հարթաչափեր

16 Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար գործածված ածական կա:

- 1) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, Քան թե հավատա կնոջ երդումին:
- 2) Դու, Արագած, ալմաստ վահան Կայծակեղեն թրերի, Գագաթներդ բյուրեղ վրան Թափառական ամպերի:
- 3) Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես, Տարել, ներել ու սիրել, Վատը լավ եմ տեսել ես:
- 4) Բարակ ամպերը մաղում են ոսկի, Ջրերը անուշ հեքիաթ են ասում...

64 Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:
- 2) Չորի բերանում կտրուկ գառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
- 3) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հագին բանակային շինել էր:
- 4) Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:

65 Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

Պատուհանըս մատնահարեց ու անցավ, Հովն հերարձակ աշունին. Չարաճըճի ինչպես աղջիկ մը, ինչպես Խաղընկեր մը՝ դըրան ետին մոռցրված...

ա. անձնավորում  
բ. համեմատություն  
գ. չափազանցություն  
դ. մակդիր

- 1) չորսը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

66 Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

- 1. Իսկապես, եգիպտական ոչ մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից մարդկանց քաշում են դեպի Եգիպտոս:
- 2. Այդ հուշարձանները աներկբայորեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահոս Նեղոսի կանաչագարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրրաններից մեկը:
- 3. Եգիպտացիները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության թատերաբեմից դարեր առաջ են հեռացել, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են թողել:
- 4. Եգիպտական բոլոր հուշարձաններն էլ այքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու ապշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Քեոփսի հիանալի բուրգը:

- 1) 3, 2, 4, 1
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 4, 2, 1
- 4) 2, 3, 1, 4

67 Ո՞վ է իր բանաստեղծական շարքերից մեկի անվանումը կապել Հայաստանի հնագույն անուններից մեկին:

- 1) Ավետիք Բասիակյանը
- 2) Հովհաննես Թումանյանը
- 3) Դանիել Վարուժանը
- 4) Վահան Տերյանը

61 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- Չավակներս, - ասաց հայրը, - ես չգիտեմ, թե երբ կհասնի իմ վերջին օրը, դրա համար էլ ուզում եմ որոշել, թե ինչ բաժին է ստանալու ամեն մեկը իմ մահից հետո:

- 1) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ նա ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու ձեզանից ամեն մեկը իր մահից հետո:
- 2) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 3) Հայրն ասաց իր զավակներին, որ նա չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու իրենցից ամեն մեկը իր մահից հետո:
- 4) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի նրա վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:

62 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Նա ավելի թիֆլիսյան կինտո էր հիշեցնում, որը թյուրիմացաբար կամ պատահմամբ ժամանակավորապես կառապանի պաշտոն էր ստանձնել:
2. Հենց հարևանները չգիտեին՝ ինչպես հանգստացնեին ծերունուն պառավի մահից հետո:
3. Այն, որ բարեկամները այդ երիտասարդի երեսը օրերով չէին տեսնում, զարմացնում ու զայրացնում էր բոլորին:
4. Նրանց բաժանման հիմնական պատճառը հենց թերևս այն էր, որ յուրաքանչյուրը իբրև թե ուզում էր օգնել, բայց իրականում ոչինչ չէր անում:

- ա. ձկն պարագա
- բ. որոշիչ
- գ. ուղիղ խնդիր
- դ. ստորոգելի
- ե. ենթակա

- 1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
- 2) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ

63 **Ժխտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:**

- 1) Այս աշխատանքի նպատակը չէ ստանալ ընդհանուր, միասնական և վերջնական լուծում:
- 2) Այն, որ նրա գրական ժառանգությունը վաղուց է դարձել ռուս և այլազգի գրականագետների ուսումնասիրության առարկա, նորություն չի մեզ համար:
- 3) Այստեղ սովորողը պետք չէ ընկալի գրականության պատմական զարգացման ընթացքը:
- 4) Կեղծ դատողություններ պետք չի պարտադրվեն երեխաներին:

17 **Քանի՞ տեսակ դերանուն կա տրված հատվածում:**

Ո՛վ իմանա՛ որ ընկանք,  
Քանի օրվա հյուր ընկանք,  
Մերն ու սիրտն էլ երբ չկա,  
Կրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:

- 1) չորս
- 2) մեկ
- 3) երկու
- 4) երեք

18 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) ուտել, հագնել, սովորել, խմել
- 2) կառչել, ասել, թռչել, զբոսնել
- 3) կանչել, ննջել, հոտոտել, արտագրել
- 4) կոտրատել, տանել, վերափոխել, տալ

19 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Հետևյալ առավոտ իշխանի հրամանով Տրդատի հովանոցի առաջ հավաքվեց Գառնիում գտնվող բոլոր զորքերը:
- 2) Մի քանի ժամից Գառնու ամրոց հասավ և՛ Հովհաննես կաթողիկոսը, և՛ Մուշեղ բերդակալը:
- 3) Ամբոխը բաժանեցին երեք հավասար մասի. նրանցից ամեն մեկը պետք է բռնեին հովտի մի զառիվայրը:
- 4) Ամենքն էլ քաղցր բուն էին մտել, բայց մի քանիսը, եկողների քայլատրոփը լսելով, վեր թռան տեղներից:

20 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Արտեմիսի տաճարը, որը երեսապատված էր ձյունաթույր -----, շողարձակում էր հարավային արևի շլացուցիչ -----, և երբ ----- տաճարի նախամուտքի լայն աստիճաններով -----, նրան զարմացնում էին հատակի խճանկարների զարդարանքները:

(ճառագայթ, բարձրանալ, այցելու, սվաղ)

- 1) սվաղով, ճառագայթներից, այցելուն, բարձրանում էր
- 2) սվաղով, ճառագայթներով, այցելողը, բարձրանում էր
- 3) սվաղներով, ճառագայթներով, այցելուն, բարձրացել էր
- 4) սվաղից, ճառագայթներից, այցելում էս, բարձրանալով

21 **Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
- 2) Ուրախանում էր իբրև խաղով տարված մի երեխա սակայն հոգու խորքում անհուսության ստվերներն էին խտացած:
- 3) Շշնջում էին նարինջները որպես թե կանանց մետաքսե քղանցքների սարսուռները լինեին:
- 4) Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ուներ տիրելու ինչպես մարդկային տարերքին այնպես էլ բնությանը:


22 Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

Թփերի խշռոցը լսեցին թե չէ, կաքավներն իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:

- 1) Կաքավների՝ թփերի խշռոցը լսելու պահին նրանք իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 2) Կաքավները թփերի խշռոցը լսելու ժամանակ իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 3) Կաքավները թփերի խշռոցը լսելուց հետո իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:
- 4) Թփերի խշռոցը լսելուն պես կաքավներն իսկույն մի քանի պտույտ արին օդում, իջան արևախանձ արտերի վրա:

23 Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Թեև գետն արդեն կես էր եղել և սպառնում էր շուտով մի առվակ դառնալու, սակայն գյուղացիք շարունակեցին ծիծաղել երևակայական վիշապի վրա և ջրի նվազելը համարեցին որևէ բնական պատճառի արդյունք՝ բացարձակ չանհանգստանալով ոչ մի բանից:



24 Նախադասություններից քանիստ՞ում տրոհվող դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Ուղղահիգ նուրբ քիթն ու երկար թերթերունքները մի ուրույն բարետեսություն են տալիս խաբուսիկ հմայքներով օժտված նրա գունատ դեմքին:
2. Միալար անձրևն ու լուսակնատներից փչող միջանցիկ քամին ավելի էին խորացրել այն թախիծը որ նրան տիրել էր աշխատանքն սկսելիս:
3. Ճակատին թափված երկար խոպոպները հետ տանելուց հետո նա ուղղեց մեջքը մի պահ լուռ նայեց լույսի երդիկից ներս ընկած սյանը ապա մոտեցավ վարպետին:
4. Քիչ հետո շունչը պահելով և զգուշորեն անցնելով կամարակապ ու կիսախավար միջանցքը Ոսկանը ականջը մոտեցրեց սևացած դռներից մեկին:

- 1) չորսում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

56 Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **ձեռքերը թուլանալ**-վիատվել, **սողոմ-գոմոր**- խառնակություն, **չինական պարիսպ**- հնագույն շինություն
- 2) **դեմն առնել** - կասեցնել, **գույները խտացնել** - չափազանցված ներկայացնել, **գլուխ քերել** - հաջողեցնել
- 3) **գլուխ կոտրել** - ճիգ ու ջանք թափել, **դուռը գալ** - խնդրանքով մեկի մոտ գնալ, **երեսը չտեսնել** - մի բանից անտեղյակ լինել
- 4) **երկու քայլի վրա**-մոտիկ, **հոնքերը կիտել**-մռայլվել, **աչք փակել**- անուշադրության մատնել

57 Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա:

- 1) Թե կյանքը սա է, ես անիծում եմ մահը:
- 2) Քանի դեռ ճրագը վառվում էր, երրորդ մարդը, աչքերը լաթով կապած, նստած էր սենյակում:
- 3) Դա միակ գործն էր, որի համար հետագայում այնքա՛ն զոջացել էր նա:
- 4) Մինչ սողունը փախչում էր երիտասարդից, վերջինս գնաց նրա հետևից:

58 Ընդգծվածը ո՞ր եղանակի բայաձև է:

Այսօր **գթանք** իրարու, **Խեղճ** լինենք ու չամաչենք:

- 1) ենթադրական
- 2) հրամայական
- 3) ըղձական
- 4) սահմանական

59 Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Հեռվում երևացին մշուշված սարերը:
- 2) Հորեղբայրս պատմում էր երկու արաբների՝ իմաստունի և հիմարի պատմությունը:
- 3) Այդ դեպքերից հետո ես երբեք չեմ մոռանա այն գարնան իրիկունը:
- 4) Այս հանգամանքը վիատեցրեց վերջին դիմադրողներին:

60 Ո՞ր նախադասության մեջ անջատման անուղղակի խնդիր կա:

- 1) Վանքի պարիսպներից դուրս կառուցված այդ շինությունը ճանապարհորդների օթևանն էր:
- 2) Յավից տաքացած՝ էլ բան չեն հարցնում, Թռչում են՝ ասես ահից հալածված:
- 3) Փոքրահասակներից մի քանիսը, որոնք սովորում էին դպրոցում, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձանից:
- 4) Քույր ու եղբայր պատուհանից նայում էին հարևան աղյուսե տան խուլ պարապությանը:

**Բ մակարդակ**

51 Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

*Քիչ հե-վում (1)՝ ու-իղ (2) իմ դիմաց, Արարատն է՝ մեր պատմության մեծ որ-ն (3) ու տա-ագիրը (4): Ալ-արս (5) այս լեռը երևի աշխարհի ամենաբարձր սարն է. հայ մարդուն նա երևում է աշխարհի բոլոր ծա-երից (6): Տա-ական (7) ճշմարտություն է. կարոտում են հարազատին: Դեռ չեմ լսել, որ որև- (8) թուրք կարոտի այս սարին: Իսկ հեռվում ու-արերձ (9) բարդիների կատարներին թևածող արագիլները սաստկացնում են հոգու- (10) ցավը:*

- 1) 1-ռ, 2-դղ, 3-փ, 4- ր, 5-եվ, 6-կ, 7-րր, 8-է, 9-դ, 10-տ
- 2) 1-ր, 2-դ, 3-բ, 4-րր, 5-եվ, 6-գ, 7-ր, 8-ե, 9-դղ, 10-դ
- 3) 1-ռ, 2-դ, 3-փ, 4-րր, 5-և, 6-կ, 7-ր, 8-ե, 9-դ, 10-տ
- 4) 1-ռ, 2-դ, 3-բ, 4-ր, 5-եվ, 6-գ, 7-րր, 8-է, 9- դղ, 10-դ

52 Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ՉԼԹ-729
- 2) ՆԾԹ-459
- 3) ՓՉՀԳ -8762
- 4) ՅՍԱԵ-6216

53 Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.

- 1) համալսարան, սպասարահ, անդորություն, կապտավուն
- 2) ծնկահող, վերջընթեր, ուխտագնաց, չնաշխարհիկ
- 3) շարադրանք, ճեպընթաց, անրջային, սպասավոր
- 4) մրգատու, լուսնկա, անակնկալ, փայլփլել

54 Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) *դարակազմիկ* - դարաշրջան կազմող, նշանավոր, *մախաթ* - մեծ ասեղ
- 2) *նիզ* - մետաղյա ամուր ձող, *հովեկ* - գեփյուռ,մեղմ քամի
- 3) *հողանի* - մերկ, բաց ուտերով, *խոնջանալ* - հոգնել
- 4) *եռոտանի* - երեք ոտք ունեցող, *դերձան* - կարի թել

55 Ո՞ր շարքի բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) ցորնամրիկ – *ցորեն*, *մրիկ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 2) ճամփաբաժան - *ճամփա*, *բաժ*՝ արմատներ, *ան*՝ վերջածանց
- 3) հրագանգուր - *հուր*, *գանգուր*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 4) մոխրագույն - *մոխիր*, *գույն*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ

25 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Այդտեղ էր և նշանավոր պալատական բանաստեղծը, որ երգելով Ֆաթիմի հաղթանակներն ու փառահեղ գործերը՝ արժանացել էր նրա ջերմ համակրանքին:
- 2) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսայից է (ես նրան նամակ էի գրել), ու հապշտապ բացեցի նկարագարո՞ ծրարը, որ կարդամ գրությունը:
- 3) Գյուղի եզրին խմբված հետաքրքրասերները քար կտրած հետևում էին բոցագույն նժույգի գազազած ընթացքին:
- 4) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույգը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ զառիվեր, այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամբողջ հասնի մի քանի վայրկյան առաջ:

26 Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Այնպես զգվող է երեկոն անափ,  
Ծաղիկներն այնպես նագով են փակվում,  
Շուրջս վառված է մի անուշ տազնապ,  
Մի նոր հուզում է սիրտս մրրկում....*

- 1) համեմատություն
- 2) շրջադասություն
- 3) մակդիր
- 4) փոխաբերություն

27 Ո՞ր բարբառի հիմքի վրա է ձևավորվել գրական արևելահայերենը:

- 1) Գորիսի
- 2) Պուլսի
- 3) Արարատյան
- 4) Կարնո

28 Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ:

- 1) Հեղինակը քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է կատարել՝ ստուգելով, ճշտելով իրեն հայտնի բոլոր փաստերը:
- 2) «Հայոց պատմությունը» Խորենացին գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով:
- 3) Հայ մատենագրության մեջ այն առաջին գրավոր հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
- 4) Խորենացին իր պատմությունն ավարտել է նշանավոր «Ողբ հայրենասիրի» գլխով:

29 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Մի՛ բազմապատկիր ցավս հեծության  
Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս,  
Մի՛ դատապարտիր արդեն պատժվածիս,  
Բազմաչարչարիս մի՛ տանջիր նորեն...*

- 1) «Բիբլիական», Հովհաննես Շիրազ
- 2) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 3) «Գանգատ», Ֆրիկ
- 4) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց

30 **Տրված հատվածը «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Գավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերթ սուհու գեղեցկությունն է պատկերում:**

Կիրիշկեն՝ Էնոր էղնգներ ռանդայով տաշած է.  
Ա՛խ, հալա տոգ՝ ռանդայով տաշած է...  
Կիրիշկեն՝ Էրեսի կարմրություն նռան գինի է,  
Ա՛խ, հալա տրգո, նռան գինի է...

- 1) Գեղձուն-Ծամի
- 2) Ծովինարի
- 3) Խանդութի
- 4) Գոհարի

31 **Տրված հատվածը Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:**

Անմահական ջրրով լիքըն օսկե փրնջան իս ինձ ամա.  
Նըստիմ, վրբես շրվաք անիս՝ զարբաք վրբան իս ինձ ամա.  
Սուչս իմացի՛, է՛ նենց սպանե՛ սուլթան ու խան իս ինձ ամա:

- 1) «Գուն է՛ ն գրլխեն իմաստուն իս»
- 2) «Աշխարս մե փանջարա է»
- 3) «Թամամ աշխար պրտուտ էկա»
- 4) «Աշխարումս ա իս չիմ քաշի»

32 **Ավետիք Իսահակյանի տրված ստեղծագործություններից որը ի՞նչ ժանրի գործ է:**

- 1. «Մեր պատմիչները և մեր գուսան ա. պոեմ  
ները» բ. լեգենդ
- 2. «Հայրենիքիս» գ. պատմվածք
- 3. «Աբու-Լալա Մահարի» դ. բանաստեղծություն
- 4. «Համբերանքի չիբուխը»

- 1) 1-ա, 2-բ, 3-բ, 4-գ
- 2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 3) 1-ա, 2-դ, 3-ա, 4-գ
- 4) 1-դ, 2-դ, 3-ա, 4-գ

33 **Բաֆթու «Մամվել» պատմավեպում ի՞նչ ճակատագրի է արժանանում Համազասպուհին:**

- 1) Նետահարվում է Մերուժան Արծրունու կողմից, երբ ամրոցի փոքրաթիվ պաշտպանների հետ անձնվիրաբար կռվում էր պարիսպների մոտ:
- 2) Գերվում է Շապուհի կողմից և տարվում Պարսկաստան:
- 3) Գաժանաբար սպանվում է Վահան Մամիկոնյանի հրամանով:
- 4) Արտագերս ամրոցի գետնուղիներով կարողանում է փախչել գերությունից:

34 **Ո՞րը Գանիել Վարուժանի ժողովածուներից չէ:**

- 1) «Սարսուռներ»
- 2) «Հեթանոս երգեր»
- 3) «Ցեղին սիրտը»
- 4) «Խղճմտանքի ձայներ»

48 **Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Անցկացվել են չորս տարին մեկ անգամ սրբազան Օլիմպոսում՝ Քրոնիոն լեռան ստորոտում, և քիչ-քիչ ընդարձակվել են դրանց ընդգրկման աշխարհագրական սահմանները՝ ներառելով նորանոր կղզիների մարզիկների: Քառասուներորդ խաղերից սկսած՝ մասնակցության թույլություն են ստացել փոքրասիական և հարավիտալական գաղութների հույները. բարբարոսների ներկայացուցիչները կարող էին լինել սոսկ հանդիսատես:
- 2) Խաղերի արդյունքները գրոյացվել են ապաշնորհ բռնակալի մահից հետո, ապա արգելվել ընդհանրապես, բայց ուշագրավ է մի բան. մարմարյա սալիկի վրա արձանագրված վերջին հաղթողի անունը Վարագրատ Արշակունի արքայի անունն է (գահակալել է 374-378 թթ.), որը 394-ի խաղերում հաղթել է կռիվամարտում: Մեր օրերում դրանք մարզական ամենազանգվածային միջոցառումներից են:
- 3) Եթե հավատանք հին հունական հաշվարկներին, 394 թ. հռոմեական կայսր Թեոդոսիոս Առաջին Մեծի կողմից արգելված համահունական օլիմպիական խաղերը եղել են թվով 293-րդը: Օլիմպիական խաղերը հիմնադրվել են Ջևս աստծու պատվին և դարձել ամենանշանավորը համահունական բոլոր խաղերի մեջ:
- 4) Հետագայում խաղերը տեղափոխվել են Հռոմ, ապա կրկին Հունաստան, որոշ տիրակալների օրոք ձեռք բերել նախկին հնչեղությունը կամ անտեսվել: Խախտվել է անցկացման ժամանակացույցը, ինչպես Ներոնի օրոք, որը նաև հրամայել է ջարդել նախորդ բոլոր հաղթողների արձանները, ավելացրել նոր՝ երգիչների մրցույթ, որի հաղթողն ինքն է եղել, զավթել է մարտակառքի մրցության հաղթողի պսակը, քանի որ եղել է միակ մասնակիցը: Ասում են՝ երկու անգամ ընկել է մարտակառքից մինչև եզրագծին հասնելը:

49 **Տրված հատվածներից որո՞նք են գրաբար.**

- 1) Քանի գուգե քամին տանե՛ ծովեմեն ավագ չի՛ պակսի.  
Թեգուգ ըլիմ, թեգուգ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի՛ պակսի...
- 2) Բարեկամութիւններն ալ ատանկ են. հարկ է, որ ան խորտակուի, որպէսզի կորուստին մեծութիւնը կարենանք գգալ և չափել:
- 3) Չիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցեք,  
Թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, գտերն յիշեցեք:
- 4) Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:

50 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

- 1. Ու մենք անհատնում
- 2. Հայոց լեռներում
- 3. Էն անլույս մըթնում
- 4. Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր
- 5. Գլժար լեռներում
- 6. Երկա՛ր դարերով գրնում ենք դեպ վեր



46 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների թվահամարները:**

Ընդամենը այս եմ երգել, ու եթե ինձ հաջողվել է իմ այրվող այգեստանների ծուխը հասցնել մեր մեծ նախնիների ստեղծած փառապանծ կոթողների բարձրությանը, այն ժամանակ ես հանգիստ սրտով կարող եմ ապրել:

- 1) **այս** – ուղիղ խնդիր, **երգել եմ** - բաղադրյալ ստորոգյալ
- 2) **ինձ** – հանգման անուղղակի խնդիր, **այրվող** – որոշիչ
- 3) **իմ** – հատկացուցիչ, **փառապանծ** – որոշիչ
- 4) **բարձրությանը** – հանգման անուղղակի խնդիր, **ես** - ենթակա
- 5) **այն ժամանակ** – ժամանակի պարագա, **ծուխը** – ուղիղ խնդիր

47 **Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի բույք պետք է դրվի:**

- 1) Նա չորս կողմն էր նայում ինչ-որ բան գտնի ամառային ոսկեվարս հրաբորբ արևից պատսպարվելու:
- 2) Ուխտյալ ժողովրդի զինվորագրվելը ճիշտ է հուսադրող էր բայց ինքը որպես հազար ու մի կրակի միջով անցած զորական մտահոգ էր ծայրաստիճան:
- 3) Նրա զորաբանակը դյուրաճապուկ նժույզներով հեծյալների սև թանձրությամբ շարժվող մի անտառ լինեք ասես կարծես մի աշխարհ տեղափոխվում էր մի ուրիշ աշխարհ սարսափ ու մահվան տենդ սփռելով չորսքուլորը:
- 4) Երբ սպարապետը մոտեցավ նրան մարդը արդեն երևաց տարեց մի գեղջուկ էր անվրդով նայեց եկվորին և այդ շինականը չփոխելով դեմքի լուրջ արտահայտությունը վեր կացավ արժանապատվորեն բարև բռնած:
- 5) Հուլիսյան մի գաղջ խեղդուկ օր այդ ճանապարհով անփութորեն բարձրանում էր մի երիտասարդ գլխարկի հովարը աչքերին քաշած ականջը մեղունների ու ծղրիղների միալար ձայնին:

35 **Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

1. Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի
2. Եվ ո՞ւմ համար - էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
3. Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով
4. Ինչ-որ մեկի սրտում բացված - վերք է կարծես այս կյանքը մի

- 1) 4, 1, 2, 3
- 2) 1, 4, 2, 3
- 3) 1, 2, 4, 3
- 4) 2, 3, 1, 4

36 **Նաիրի Ջարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ ո՞վ է ասում Արային.**

Հայոց արևն ես դու:  
Եթե զրնաս վահագնապաշտ մեր աշխարհից հեռու,  
Կըթառամի Արմավիրի արքայական այգին,  
Սև ձյուն կգա Արագածի անուշաբույր ծաղկին,  
Կցամաքի Տոսպա կարկաչահոս առուն,  
Կրկարճանա հայոց քաղցրիկ լեզուն:  
Պատժի՛ր, եթե հանդուգն է քո ծառան,  
Բայց մի՛ գնա Ասորեստան:

- 1) Վարուժանը
- 2) Արբակը
- 3) Նուարդը
- 4) Կաթնոսը

37 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝  
Հայտարարվում է և օրենքից դուրս:  
Բայց չե՛ն վախենում նրանք չար մահից.  
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

- 1) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»
- 2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 4) «Վարք մեծաց»

38 **Գերեցիկ Գեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:**

- 1) աջակցել Վասակին ձեռնադրելու արքա
- 2) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
- 3) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա
- 4) Հայաստանում մեհյաններ կառուցել

39 **Տրվածներից քանի՞սն են գրվում միասին:**

փութ(եռանդ), թան(ապուր), հետ(մնալ), հարյուր(հազար), ի(հեճուկս), առ(այն), ափ(հանել), դեմ(դիմաց), իրար(անցում), միտք(անել), հենց(որ), ամենից(երկար), առ(և)տուր, վեր(կենալ), խուլ(համր), պատ(շարել):

40 **Բառերից և բառաձևերից քանիսի՞ վերջին վանկն է շեշտվում.**

միթե, նամանավանդ, Կապան, որպիսի, Գյումրի, որերորդ, ուսուցիչը, հանձն առնել, դուստր, միջնորմ, առաքյալ:

41 **Տրվածներից քանիստ՞ւմ է երես դարձնել դարձվածքի իմաստը սխալ մեկնաբանված.**

արհամարհել, խռովել, մոռանալ, ծեծել, խուսափել:

42 **Բառերից քանի՞սն են հողակապով.**

աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ, ամպամած, կղզյակ, գինեգործ:

43 **Ընդգծվածներից նշել ժխտական դերբայների(ձևաբայերի) քանակը:**

1. Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի  
Բան **չի դրել** մեր բախտի ամանում,  
Եվ **չդրածն** էլ շատ է համարում:
2. Եթե **չեք իջել** դուք երբևէ  
Ու չեք անրջել դուք երբևէ  
Աղոթարանիս լճակներում,  
Չվո՞ղ կարապներ, ձեզ **չեմ ներում**:
3. Ես ձեր խիղճն եմ, ինձ **մի՛ խաբեք**,  
Ձեր թևերն եմ, ինձ **մի՛ կապեք**,  
Ինձ մի՛ կտրեք, ձեր երակն եմ:
4. Չէ՛, աստված **չկա**: Լիներ՝ անպատճառ  
Մեզ իր մեծության սրբազան ծառից  
Կտար բարության այնպիսի պաշար,  
Որ հող **չմնար** խափանված չարից:
5. Մենակությունն է քայլ պահում քեզ հետ,  
Երբ **չունես** արդեն ուրիշ լծակից,  
Որպեսզի դու քո դեմքը **չտեսնես**,  
Փախչում ես անգամ լիճ ու լճակից:

44 **Նշել ըղձական եղանակի բայաձևերի քանակը:**

1. Ի՞նչ անեմ ես՝  
Մոլորյալս՝ խեղճ ու կրակ,  
Որ դառն ու տոթ,  
Ինքնագլուխ իմ օրերում  
Իրար բերեմ բևեռները իմ հակառակ,  
Մեկմեկու հետ հաշտեցնեմ:
2. - Արդա՛ր բաշխիր հացդ արդար  
Սովյալներին ու անկյալին,  
Տո՛ւր, թող ուտեն, չխնայես  
Ոչ մի պատառ,- ասեմ, զնամ:
3. Քանի դեռ ելք ու հնար  
Չես գտել՝ մահդ կանխելու,  
Դու պիտի մնաս այսպես,  
Աչալուրջ, ակնբա՛ց աշխարհ:
4. Նեղություն շատ եմ քաշել,  
Որ մարդկանց նեղություն չտամ,  
Խավարին և կասկածին  
Հոգուս մեջ տեղուտուն չտամ:
5. Թե մի կում ջուր խմես դու  
Սալվարդի աստղահամ լճից,  
Մինչև մահ քեզ կփրկես  
Հոգնության ծանրակիր լծից:

45 **Նշել այն նախադասության թվահամարը, որում ածականով արտահայտված ենթակա կա:**

1. Կիրճերը խժռում են դարերին,  
Դարեր են կուլ տալիս կիրճերը,  
Ի՞նչ անեն ինձ նման խեղճերը:
2. Աշխարհից ես չեմ տրտնջում,  
Չեմ գանգատվում.  
Չէ՞ որ բոլորն են տանջվում,  
Բոլորն են տրտում:
3. Նույն երգն եք երգում դուք, նույն հինը,  
Եվ քանի՛ դարեր, քանի՛,  
Որքա՛ն, որքա՛ն մտերիմ է  
Ձեր դաշնը, սի՛րտ ու քամի՛:
4. Եկողները թող չիմանան  
Սոված օրեր ու սև տարի,  
Թող բոլորը զան ու զնան,  
Աշխարհին բան չպատահի:
5. Թշնամին եկավ մութի պես կամաց,  
Ամենքն ահաբեկ փախան դեպի սար: